# ԳԱՐՆԱՆ ԽՈՀԵՐ

*Զարթնում է երկիր... Անուշ կարկաչով*
*Վազում են ջրեր, և առաւօտեան*
*Կենարար հովիկն արդէն ջերմ շնչով*
*Շոյում է մատաղ կանաչը գարնան։*

*Ահա՛ և սարեակ. դալար ոստի վրայ*
*Կանգնած ճռուողում, սուլում է կայտառ.*
*Թափ տալով թևերն ողջունում է նա*
*Վառ արշալուսի ժպիտը պայծառ։*

*Ու ձմեռն անցա՛ւ։ Բայց դու, իմ ընկե՛ր,*
*Տրտնջում էիր, սրտնեղած, տրտում—*
*Ու վաղուց չէր այդ—թէ մռայլ օրեր,*
*Թէ ցուրտն ու խաւար հոգիդ են ճնշում։*

*Ա՜խ, ո՛չ թէ բնութեան—մեր կեանքի ցրտից*
*Վախեցի՛ր, եղբա՛յր... Ձմեռ էր երէկ,*
*Իսկ այսօր գարուն, զուարթ, ծաղկալից—*
*Մե՛նք—ծաղկելու չենք ասես թէ երբէք...*

**Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**